



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ՝ Պալատ**) խորհուրդը, մասնակցությամբ Պալատի խորհրդի նիստը նախագահող՝ խորհրդի անդամ, Պալատի նախագահի տեղակալ Նելլի Հարությունյանի, խորհրդի անդամներ՝ Մելանյա Առուստամյանի, Սեդրակ Ասատրյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Հարություն Հարությունյանի, Արայիկ Ղազարյանի, Կարեն Մեծլումյանի և Կարեն Սարգսյանի,

քննության առնելով փաստաբանների վերապատրաստման և փաստաբանության կայացման հարցերում Պալատի հետ արդյունավետ համագործակցության փորձ ունեցող կազմակերպություններին Պալատի նախագահի նախաձեռնությամբ՝ պարզեցված կարգով հավատարմագրելու հարցը,

դեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի Պալատի խորհրդի 05.02.2014թ. թիվ 3/7-Լ որոշմամբ հաստատված «Փաստաբանների վերապատրաստում իրականացնող հաստատությունների հավատարմագրման» կարգի 2.6. կետի պահանջներով՝ միաձայն

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Մեկ փարի ժամկետով հավատարմագրել ներքոնշյալ կազմակերպություններին՝

- «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն.
- Միջազգային իրավական համագործակցության գերմանական հիմնադրամ (IRZ).
- «Հայաստանի ամերիկյան համալսարան» հիմնադրամ.
- Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակ.
- Միացյալ ազգերի կազմակերպության հայաստանյան գրասենյակ.

2. Սահմանել, որ՝

- սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպություններին տրված հավատարմագրերն ուժի մեջ են մտնում 2018 թվականի փետրվարի 8-ից և գործում են մինչև 2019 թվականի փետրվարի 8-ը ներառյալ:

08 փետրվարի 2018թ.

թիվ 3/4-Լ

- սույն որոշման 1-ին կետում նշված կազմակերպությունները վերապատրաստման դասընթացները և դասընթացավարներին նախապես պետք է համաձայնեցնեն ՀՀ փաստաբանների պալատի հետ:

ՀՀ փաստաբանների պալատի
նախագահի տեղակալ,
խորհրդի նիստը նախագահող՝

Նելլի Հարությունյան

08 փետրվարի 2018թ.
թիվ 3/4-L
ք. Երևան